

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ **4-րդ ԵՌԱՄԱՅԱԿԻ**
 ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
	135	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրության 8-րդ կետով հավանության արժանացած ռազմավարության մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ ԿԳ նախարարության 2017-10-20 N01/14/14415-17 գրությամբ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Համաձայն ՀՀ կառավարության 2017-11-03 N02/14.1/24330-17 գրությամբ ներկայացված հանձնարարականի Նախագիծը լրամշակվել և ներկայացվել է ՀՀ կառավարություն ՀՀ ԿԳՆ 2017-12-05 N01/14/17016-17 գրությամբ:	հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ
	136	«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Օրենքի նախագիծը լրամշակված փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարություն ՀՀ ԿԳՆ 2018-01-09 01/06.2/90-18 գրությամբ:	նոյեմբերի 1-ին տասնօրյակ
	137	«Միջնակարգ կրթության երրորդ աստիճանում (10-12-րդ դասարաններ) կրեդիտային համակարգի ներդրման փորձնական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը 10.11.2017թ. 01/07.2/15700-17 գրությամբ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	նոյեմբերի 1-ին տասնօրյակ
	138	«Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ կառավարության արձանագրային որոշման 20.11.2017թ. 01/07.2/16139-17 սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	նոյեմբերի 2-րդ տասնօրյակ
	139	«Նոր սերնդի դասագրքերի և ուսումնասօժանողակ գրականության ստեղծման չափանիշերին և	ՀՀ կառավարության արձանագրային որոշման 20.11.2017թ. 01/07.2/16137-17 սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	նոյեմբերի 2-րդ տասնօրյակ

		գործիքակազմին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկա-յացնելը		
	140	«Ուսուցիչների վերապատրաստման, ատեստավորման և մասնագիտական առաջխաղացման մեխանիզմները ներդնելու ծրագրին և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Ուսուցիչների վերապատրաստման, ատեստավորման և մասնագիտական առաջխաղացման արդյունավետ համակարգի ստեղծման գործընթացի վերաբերյալ 2017-11-16 թ. 01/07.2/16024-17 ելից գրությամբ ՀՀ կառավարությանն առաջարկվել է կատարման ժամկետ սահմանել 2018թ. 4-րդ եռամսյակի ավարտը:	Նոյեմբերի 3-րդ տասնօրյակ
	141	«Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ ԿԳ նախարարության 2017-11-30 N01/14/16757-17 և ի լրումն 2017-12-05 N01/14/17094-17 գրություններով ՀՀ կառավարության օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն:	Նոյեմբերի 3-րդ տասնօրյակ
	142	«Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ կառավարության արձանագրային որոշման 30.11.2017թ. 01/07.2/16741-17 ելից գրությամբ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	Նոյեմբերի 3-րդ տասնօրյակ
	144	«Հայաստանի տեխնոլոգիական հետազոտական համալսարան ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ ԿԳ նախարարության 2017-11-30 N01/14/16758-17 և ի լրումն 2017-12-25 N01/14/18161-17 գրություններով «Հայաստանի տեխնոլոգիական համալսարանի հիմնման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Համաձայն ՀՀ կառավարության 2017-12-27 N 02/14.1/28486-17 գրությամբ ներկայացված հանձնարարականի՝ քննարկումների արդյունքում, Նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն ՀՀ ԿԳՆ 2017-12-27 N 01/14/18317-17 գրությամբ:	Նոյեմբերի 3-րդ տասնօրյակ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Կարծիք
<p>«Հ կրթության և գիտության նախարարություն»</p>	<p>142</p>	<p>Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովում</p>	<p>3) <u>հաջորդ տարվա բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում մանկավարժական խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների, ՀՈՒՀ-ի կառավարման խորհրդի, քաղաքացիների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝</u> - <u>հաջորդ տարվա բյուջեի նախագծի նախնական տարբերակի հանրային քննարկումների կազմակերպում</u> ՀՀ ԿԳ նախարարության 08.09. 2017թ. N 07.2/[219004]-17 ելից գրությամբ ՀՀ ԿԳՆ ենթակայության դպրոցներին հանձնարարվել է, իսկ Երևանի քաղաքապետարանի և մարզային ենթակայության դպրոցներին առաջարկվել է ՀՀ ԿԳ նախարարի՝ 2015 թվականի մարտի 30-ի N205-Ա/Ք հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգի» Ձև 1-ով հաստատված ժամանակահատվածում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը անհատական կայքէջերում:</p>	<p>հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>
			<p>4) <u>առաջարկված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա բյուջեի նախագծի նախնական տարբերակում փոփոխությունների կատարում</u> ՀՀ կրթության և գիտության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 7-ի N01/07.2/15603-17 գրությամբ հանրակրթական ուսումնական հաստատություններին հանձնարարվել է մինչև 2017 թվականի նոյեմբերի 15-ը հանրակրթական ուսումնական հաստատության հաջորդ տարվա բյուջեի նախագծի վերաբերյալ շահագրգիռ կողմերի առաջարկած դիտողությունները և առաջարկությունների հիման վրա բյուջեի նախագծի նախնական տարբերակում կատարել համապատասխան փոփոխություններ և այդ մասին դպրոցի անհատական կայքէջում տեղադրել անհրաժեշտ տեղեկատվություն:</p>	<p>նոյեմբերի 2-րդ տասնօրյակ</p>
			<p>5) <u>բյուջեի նախագծի քննարկում և հավանության արժանացում կառավարման խորհրդի կողմից</u> ՀՀ կրթության և գիտության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N01/07.2/17191-17 գրությամբ, ըստ ենթակայության գործող հանրակրթական ուսումնական</p>	<p>դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>

			<p>հաստատություններին հանձնարարվել է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 19-ը քննարկել դպրոցի բյուջեի նախագիծը և ներկայացնել կառավարման խորհրդի քննարկմանը՝ հավանության արժանացնելու նպատակով և այդ մասին տեղեկատվություն տեղադրել դպրոցի անհատական կայքէջում:</p>	
			<p>6) <u>«Հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների տարեկան ծախսերի հաշվետվության նկատմամբ մշտադիտարկում»</u> ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից պարբերաբար իրականացվել է մշտադիտարկում՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների անհատական կայքէջերն ուսումնասիրելու, կայքէջերում տարեկան ծախսերի և անհրաժեշտ տեղեկատվության ժամանակին տեղադրման մասն ապահովելու նպատակով:</p>	<p>2017 թ. ընթացքում (պարբերաբար)</p>
143	<p>Միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմի մշակում</p>	<p>4) <u>մշակել ֆինանսավորման նոր մեխանիզմ</u> 5) <u>պետական ուսումնական հաստատության դասարանի կազմավորման և բազմահամակազմ դասարանների ձևավորման կարգի վերանայում</u> 6) <u>կրթության կազմակերպման առանձնահատուկ մոդելների մշակում փորրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների համար</u> ՀՀ ԿԳ նախարարության՝ սույն թվականի օգոստոսի 30-ի N01/14/11550-17 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N1262-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված փաթեթը: «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի և «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագծերը՝ 2018 թվականի հունվարի 10-ի N 01/14/118-18 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p>	<p>փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	
144	<p>Դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության</p>	<p>1) <u>աշխատանքային խմբի ձևավորում</u> 2) <u>դպրոցի զարգացման ծրագրի կազմման ներկա</u></p>	<p>հունվարի 3-րդ</p>	

		<p>հաստատում և ներդնում</p>	<p><u>իրավիճակի գնահատում</u></p> <p>3) <u>դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության նախագծի մշակում</u></p> <p>4) <u>հանրային քննարկումներ</u></p> <p>5) <u>դպրոցի զարգացման ծրագրի նախագծի լրամշակում</u></p> <p>6) <u>դպրոցի զարգացման ծրագրի հաստատում</u></p> <p>« ԿԳ նախարարությունում ձևավորված աշխատանքային խմբի կողմից մշակվել է փաստաթղթի նախագիծը: Սակայն, « վարչապետի՝ « ԿԳ նախարարություն կատարած այցի շրջանակներում քննարկվել է գերակա խնդիրների ապահովման գործընթացը և հետագա քայլերը, որի արդյունքում վարչապետը հանձնարարել է « կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի գերակա խնդիրների ցանկից հանել 144-րդ (101-րդ) կետը, այն դիտարկելով որպես հանրակրթական դպրոցի ներքին փաստաթուղթ: Ելնելով նշված հիմնավորումներից, « կառավարության 2017 թվականի հունիսի 23-ի N29.7/[410894]-17 հանձնարարականի առնչությամբ առաջարկվել է՝ « կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի գերակա խնդիրների ցանկից հանել 144-րդ (101-րդ) կետը:</p>	<p>տասնօրյակ</p>
	<p>145</p>	<p>Նախակրթարանները 12-ամյա կրթության համակարգում (1+11) ներառելու արդյունավետության ուսումնասիրություն</p>	<p>3) <u>կրթության որակի վրա նախակրթարանը 12-ամյա կրթության համակարգում ներառելու հնարավոր ազդեցության գնահատում</u></p> <p>Ուսումնասիրության կատարումն ապահովելու նպատակով իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Ուսումնասիրվել են Ազգային կրթական համակարգերի արդյունավետության վարկանիշավորման ցանկում /կրթական համակարգերի արդյունավետությունը գնահատվել է PISA, TIMSS և PIRLS հետազոտությունների արդյունքներով և բնակչության կրթության մակարդակի աստիճանով ընդգրկված 40 երկրների կրթական համակարգերի առանձնահատկությունները՝ այդ թվում, 1-ին դասարան ընդունվող երեխաների տարիքի և միջնակարգ կրթության տևողության:</p>	<p>մարտի 2-րդ տասնօրյակ</p>
			<p>4) <u>ոլորտի մասնագետների և շահագրգիռ կողմերի կարծիքների ընդհանրացում, ուսումնասիրության արդյունքների ամփոփում</u></p> <p>Նշված ենթակետի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը « կառավարության աշխատակազմ է</p>	<p>ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>

			ներկայացվել՝ ՀՀ ԿԳ նախարարության 07.04.2017 N 01/07-1/4607-17 և 10.05.2017 N01/07-1/5886-17 գրություններով:	
146	Գյուղական համայնքներում կրթության որակի և հեղինակության բարձրացմանն ուղղված ծրագրերի, հանրակրթական առարկաների ինքնուրույն սովորելու հնարավորության ընձեռում՝ տեսադասերի հասանելիությունն ապահովելու միջոցով	1) <u>ինտերնետ հասանելիության կապի ապահովում՝ տեսադասերի հասանելիության նպատակով հայկական կրթական միջավայր (armedu.am) կայքի, ինչպես նաև այլ հարթակների միջոցով առցանց դասընթացների, պարապմունքների, մրցույթների, սովորողներին հետաքրքրող հարցերի և առաջադրանքների քննարկումների, ֆորումների կազմակերպում</u> Պիլոտային փուլով իրականացրել են հեռավար դասեր՝ գործընկեր գյուղական դպրոցների մասնակցությամբ: Դպրոցների համագործակցության նպատակով կիրառվել են առցանց դասեր, որոնք իրականացվել են http://lib.armedu.am/ , http://handbook.ktak.am/ , imdproc.am կայքերում տեղադրված էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ: Մենթոր դպրոցների կողմից անցկացվել է աշակերտների գիտելիքի ստուգում, կիրառելով հիմնականում առցանց թեստավորման միջոցով գնահատման տարբերակը:	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	
		2) <u>մենթոր դպրոցների համակարգի փորձարկում և ներդրում՝ 100 գյուղական դպրոցների ընդգրկմամբ</u> Մենթոր դպրոցները շարունակում են գործընկեր դպրոցների մասնակցությամբ իրականացնել հեռավար դասեր 7-12-րդ դասարաններում բնագիտական առարկաներից, հիմնականում skype ծրագրի միջոցով: Նախատեսվում է գործընկեր դպրոցների ցանկը ընդլայնել՝ առաջնահերթությունը տալով սոցիալական աջակցություն ստացող սահմաններձ համայնքների դպրոցներին, որոնց թիվը 47-ն է: 2017թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ծրագրի մասնակից 211 դպրոցներին և 942 ուսուցիչներին միացել են 22 նոր դպրոց և 150 ուսուցիչ: Վերապատրաստվել են 350 ուսուցիչ մասնակից բոլոր դպրոցներից: Հայաստանի ուսուցիչների մասնակցությամբ սկսվել է 53 միջազգային նախագիծ:	սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	
147	Բնագիտական առարկաների և մաթեմատիկայի տեսադասերի ապահովում՝ առնվազն 7-8-րդ դասարանների համար	5) <u>ամենամյա մոնիթորինգի կազմակերպում</u> ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացը գտնվում է կրթության և գիտության նախարարության մշտադիտարկման կենտրոնում անհրաժեշտ տեղեկատվություն հավաքագրելու համար:	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	

			<p>Նախարարությունում ստեղծված է էլեկտրոնային բազա, որը ներառում է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվող տեսադասերի վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ:</p>	
	<p>148</p>	<p>Կրթական ծրագրերի վերանայում՝ համապատասխանեցնելով արդի պահանջներին՝ ներառելով ձեռնարկատիրության և ֆինանսական կրթության տարրեր</p>	<p>3) <u>մասնագիտական խմբերի ձևավորում, որոնք անմիջապես կապված են կրթական տարրեր մակարդակների մեթոդաբանության, պետական չափորոշիչների և ծրագրերի մշակման հետ, պարտադիր և վերջնական արդյունքների, առաջարկությունների նորամուծությունների և ներառական ծրագրերի ներմուծում</u></p> <p>4) <u>յուրաքանչյուր ծրագրի համար առարկայական մասնագետների խմբի ձևավորում</u></p> <p>5) <u>ներկայացված նյութերի քննարկում և գնահատում</u></p> <p>6) <u>արդյունքների ամփոփում և շտկումների ներառում ծրագրերի նախագծում</u></p> <p>7) <u>ֆինանսական կրթության ինտեգրման, ինչպես նաև ավագ դպրոցում առնվազն մեկ նոր առարկայական ծրագրի և չափորոշիչների մշակման մեկնարկ</u></p> <p>8) <u>ֆինանսական կրթության ներդրում տարրական, միջին և ավագ դպրոցներում՝ «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Հասարակագիտություն» առարկաներում</u></p> <p>1.Ֆինանսական կրթություն ս/թ սեպտեմբեր ամսից 13 դպրոցներում ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Ես և շրջակա աշխարհը» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցում՝ ֆինանսական կրթության տարրերի ներառմամբ: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է նշված առարկաների փորձնական ծրագրերը: Վերապատրաստվել է 13 դպրոցների 46 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 1600 սովորող:</p> <p>1) Ձեռնարկատիրական կրթություն - հիմնական դպրոց 1247 դպրոցների մեկական 2-րդ և 3-րդ դասարաններում ս/թ սեպտեմբեր ամսից ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցում՝ ձեռնարկատիրական տարրերի ներառմամբ: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է առարկայի փորձնական ծրագիրը: Վերապատրաստվել է 1247 դպրոցների 1356 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 62900 սովորող:</p>	<p>Տարեկան</p>

			<p>2) Ձեռնարկատիրական կրթություն - ավագ դպրոց 227 դպրոցների մեկական 10-րդ դասարաններում ս/թ սեպտեմբեր ամսից ներդրվել է փորձնական ծրագիր՝ «Ձեռնարկատիրություն» առարկայի ուսուցմամբ: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է առարկայի փորձնական ծրագիրը: Վերապատրաստվել է 227 դպրոցների 227 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 6300 սովորող:</p>	
149	Արարատյան բակլավրիատի և կրթության գերազանցության ազգային ծրագրի ներառմամբ ազգային կրթակարգի վերջնական ձևավորում	<p>1) <u>հանրակրթական դպրոցներում «Արարատյան բակլավրիատ» ծրագրի մշակում և հաստատում</u></p> <p>2) <u>ազգային կրթակարգի մշակում՝ Արարատյան բակլավրիատի ներառմամբ</u></p> <p>«Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում հանրակրթական առարկաների չափորոշիչների և ծրագրերի վերանայումն ապահովելու համար, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից մշակվել և Համաշխարհային բանկ վերջնական համաձայնեցման է ուղարկվել համապատասխան տեխնիկական առաջադրանքի նախագիծ: Համաշխարհային բանկը կրթության թիմի ղեկավարը հաստատել է ներկայացված տեխնիկական առաջադրանքը:</p>	<p>հունիսի 3-րդ տասնօրյակ սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	
		<p>3) <u>կրթության գերազանցության ազգային ծրագրի հաստատում</u></p> <p>Մեծ Բրիտանիայի (ՄԲ) ճանաչման ազգային գործակալության (UK NARIC) զեկույցը հաստատեց ԱԲ-ն որպես միջազգային լավագույն դպրոցական ծրագրերին (UK A-levels, US AP) համազոր ծրագիր, ԱԲ-ն ներառվեց Մեծ Բրիտանիայի բուհական ընդունելության միասնական համակարգում՝ UCAS-ում, որպես միջազգային որակավորումներին (European Baccalaureate, International Baccalaureate) համազոր հանրակրթական ծրագիր ՀՀ-ից, ԱԲ-ը ճանաչվեց միջազգայնորեն առաջատար մի շարք բուհերի կողմից: Մեկնարկեց ԱԲ ծրագրում դպրոցների ներգրավման գործընթացը. ՀՀ մարզերի և Արցախի 21 դպրոց ներառվեց ԱԲ-ի դպրոցների թեկնածության փուլում: Մեկնարկեց ԱԲ ծրագրում ուսուցիչների ներգրավման գործընթացը. ընտրական փուլերը հաղթահարեց և մասնագիտական զարգացման ծրագրում ներառվեց ՀՀ մարզերի և Արցախի շուրջ 110 ուսուցիչ:</p>	<p>դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	
150	Համընդհանուր ներառական կրթության ներդրում ՀՀ Լոռու և	<p>1) <u>ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցների և տարածքային մանկավարժահոգե-</u></p>	<p>դեկտեմբերի 3-րդ</p>	

		<p>Տավուշի մարզերում</p>	<p><u>բանական աջակցության կենտրոնների շուրջ 5600 մանկավարժական աշխատողի վերապատրաստում</u> Կազմակերպվել վերապատրաստում Լոռու մարզի 162 դպրոցների տնօրենների և 2012 ուսուցիչներ՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար» թեմայով: «Միասին ապրել, միասին սովորել» ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են Տավուշի մարզի 81 դպրոցների 2044 ուսուցիչ և մանկավարժահոգեբանական թիմերի 215 մասնագետ և 1764 ծնող, «Մանկավարժա հոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման հմտություններ» թեմայով վերապատրաստվել են նաև «Հույսի Կամուրջ» ՀԿ-ի Տավուշի մարզի 4 գրասենյակների 52 մասնագետներ:</p>	<p>տասնօրյակ</p>
			<p>2) <u>ՀՀ Լոռու մարզի 3՝ Սպիտակի, Վանաձորի և Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից 158 սովորողի տեղափոխում հանրակրթական դպրոց, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի կիրառում՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ուսուցչի օգնականի հաստիքի ներդրում</u> 2017 թվականի առաջին կիսամյակում դուրսբերման նպատակով գնահատվել են «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», «Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ներում սովորող երեխաները, որոնք սեպտեմբեր ամսին տեղափոխվել են հանրակրթական դպրոցներ (ընդհանուր թվով՝ 95 երեխա): Լոռու մարզում գնահատվել է 693 երեխա: Տավուշի մարզում իրականացվել է 380 երեխայի գնահատում: Նշված մարզերում Կիրառվում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ու վկայագրման նոր գործիքակազմ, հանրակրթական դպրոցներում ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիք:</p>	<p>օգոստոսի 3-րդ տասնօրյակ</p>

151	Իննամյա կրթությունից անցում 12-ամյա պարտադիր կրթության՝ ներառյալ մասնագիտական	<p>1) <u>նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության գործընթացի իրավական դաշտի կանոնակարգում</u></p> <p>Փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 28-ի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 1-ի N 297-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1330-Ն որոշման մեջ:</p> <p>Որոշման նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության 29.06.2017թ. թիվ 749-Ն որոշմամբ:</p> <p>Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում պարտադիր 12-ամյա միջնակարգ կրթությամբ պայմանավորված մեծացել է անվճար ուսուցմամբ ընդունվածների թիվը. 2017-2018 ուսումնական տարում անվճար համակարգում սովորող ուսանողների թիվն ավելացել է շուրջ 1000-ով:</p>	օգոստոսի 3-րդ տասնօրյակ
152	Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխման նպատակով անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման օրենսդրական նախադրյալների ստեղծում և բարձրագույն կրթության ֆինանսական նոր մեխանիզմների մշակում	<p>5) <u>ուսանողների ֆինանսական աջակցության տրամադրման նոր սկզբունքների մշակում (տեղեկանք)</u></p> <p>2017 թ. սեպտեմբերի 11-ի NO1/06/12108-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել բարձրագույն կրթության ֆինանսական համակարգի բարեփոխման նպատակով «Ուսանողների ֆինանսական աջակցության և կրթաթոշակների տրամադրման նոր սկզբունքների վերաբերյալ» տեղեկանքը:</p>	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ
153	Բուհ-գիտահետազոտական կազմակերպություն համագործակցության ապահովման հնգամյա գործընթացի սկիզբ	<p>3) <u>եյնելով մոդելի առանձնահատկությունից՝ աշխատանքային խմբերի ձևավորում՝ ներառելով համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչներին (տեղեկանքի պատրաստում)</u></p> <p>ԲՈՒՀ - գիտահետազոտական կազմակերպություն համագործակցության ապահովման և ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Այս նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 13.12.2016թ. N1283-Ա/2 հրամանով ստեղծված աշխատանքային խմբի ղեկավարի կողմից</p>	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ

			մշակված «ՀՀ ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման հայեցակարգ»-ի նախագիծը 2017թ. հոկտեմբերի 9-ին (01/06.2/13660-17 գրություն) ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	
154	Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան 5 որակավորումների ոլորտային շրջանակների մշակում	2) <u>բարձրագույն կրթության մասնագիտությունների մասնագիտական ոլորտների դասակարգումը ըստ խմբերի (ոլորտ, ենթաոլորտ),</u> «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համատեղ քննարկումների արդյունքում դասակարգվել են բարձրագույն կրթության մասնագիտությունների ոլորտները և ենթաոլորտները, որոնց հիմքով նախատեսվում է իրականացնել կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացը:	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	
		3) <u>բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային 5 շրջանակների մակարդակների նկարագրիչների մշակում</u> Մշակվել են «Իրավագիտություն», «Գյուղատնտեսություն», «Շինարարություն», «Ֆիզիկա» և «Կրթություն» որակավորումների ոլորտային շրջանակները՝ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան:	դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
155	Բուհերում մասնագիտության կրթական ծրագրի (կրթական ծրագրերի խմբի) պարտադիր հավատարմագրման նախապատրաստում	1) <u>իրավական դաշտի ուսումնասիրություն և հստակեցում, միասնական ժամանակացույցով հավատարմագրվող ծրագրերի խմբերի հստակեցում և դրանց առաջնահերթությունների սահմանում</u> 2) <u>կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի փորձագետների հավաքագրում և նախապատրաստում</u> «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը հանդիպումներ է կազմակերպել ինստիտուցիոնալ հավատարմագրված բուհերի ուսումնական գծով պրոռեկտորների և որակի ապահովման պատասխանատուների հետ՝ քննարկելու ծրագրային պարտադիր հավատարմագրման (այդ թվում՝ նախնական) վերաբերյալ խնդիրները: Քննարկվել են կրթական ծրագրերի խմբային (ոլորտով, ենթաոլորտով) հավատարմագրման (այդ թվում՝ նախնական) անհրաժեշտությունը, պակաս ծախսատարությունը, կազմակերպման և իրականացման ընթացակարգը, առաջարկվող ճանապարհային քարտեզի	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	

			փուլերն իրենց հիմնական նպատակներով և վերջնարդյունքներով:	
	156	Դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնում	<p>1) <u>ՀՀ Տավուշի մարզում հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցին նախապատրաստման խմբերի (նախակրթարանների) 6157 աշակերտի սննդով ապահովման գործընթացի համակարգում</u></p> <p>Ներկայումս Տավուշի մարզի 75 հանրակրթական դպրոցների նախակրթարանների, 1-4-րդ դասարանների և ներառական կրթության համակարգում ընդգրկված 6523 աշակերտ ծրագրի շրջանակում ստանում են սնունդ:</p>	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
			<p>2) <u>դպրոցական սնունդ ծրագրում ընդգրկված 400 մասնագետի վերապատրաստում</u></p> <p>Իրականացվել է 75 տնօրենի և 75 խոհարարների վերապատրաստում: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ սահմանված 400 մասնագետների վերապատրաստման ծրագրում ընդգրկված են եղել նաև ՄԱԿ-ի ՊՀԾ-ի կողմից Արարատի մարզի հանրակրթական դպրոցների մասնագետները:</p>	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
			<p>3) <u>ՀՀ Տավուշի մարզի 25 դպրոցի ենթակառուցվածքների (խոհանոց, ճաշարան) կարգավորման աշխատանքների համակարգում</u></p> <p>Տավուշի մարզի 75 դպրոցներից 54-ում ավարտվել են վերանորոգման աշխատանքները: Դպրոցների կարիքների գնահատման աշխատանքների ընթացքում պարզվել է, որ 7 դպրոցների ենթակառուցվածքները գտնվում են բավարար վիճակում, իսկ 14 դպրոցներ ունեն հիմնովին վերանորոգման կարիք: Այս պահի դրությամբ 14 դպրոցներից 6 դպրոցի համար առկա է լրացուցիչ ֆինանսավորում, որոնց վերանորոգման աշխատանքները նախապատրաստական փուլում են: 8 դպրոցների ենթակառուցվածքների վերանորոգման համար դեռևս անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցներ (դոնորների) գտնելու աշխատանքներ են ընթանում: Այնուամենայնիվ, 2017թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ այս 14 դպրոցներում ծրագիրը նույնպես մեկնարկել է, սակայն ոչ բավարար պայմաններում:</p>	օգոստոսի 3-րդ տասնօրյակ
			<p>4) <u>ՀՀ Տավուշի մարզի 75 դպրոց անհրաժեշտ խոհանոցային սարքավորումներով և ճաշարանային գույքով ապահովելու գործընթացի համակարգում</u></p> <p>Ըստ նախատեսված ժամանակացույցի՝ իրականացված աշխատանքների արդյունքում 75 դպրոցներից 61-ին հատկացվել են խոհանոցային սարքավորումներ և</p>	օգոստոսի 3-րդ տասնօրյակ

			ճաշարանային գույք: 14 դպրոցներից 6-ի սարքավորումների և գույքի մատակարարումը կիրականացվի վերանորոգման աշխատանքների ավարտից հետո:	
	157	Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները ՀՀ մարզերի զարգացման ուղղություններին և աշխատաշուկայի պահանջներին համա պատասխանեցում	<p>1) <u>մինչև 2017 թվականի ավարտը նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 40%-ում ստեղծել համապատասխան մասնագետով համալրված կարիերայի ուղղորդման միավորներ</u></p> <p>ՀՀ-ում գործող թվով 95 ՆՄԿՈՒ ուսումնական հաստատություններից 75-ում արդեն իսկ ներդրվել են կարիերայի կենտրոններ և իրականացվել են կարիերայի պատասխանատուների վերապատրաստումներ և իրազեկման սեմինարներ:</p>	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ